

Գորիս, Մաշտոցի 3
Էլ փոստ՝ goripressclub@gmail.com
հեռ.՝ 028420797, 098990731

Գորիս համայնքի ղեկավար
Առուշ Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան

Գորիս համայնքի ավագանու՝ 26.12.18թ. թիվ60Ա և համայնքի ղեկավարի՝ 05.02.2019թ. թիվ126Ա որոշումներով «Գորիսի մամուլի ակումբ» հասարակական կազմակերպությունը կանոնադրական նպատակներով գործունեություն իրականացնելու համար Գորիս համայնքի Մաշտոցի 3 տարածքում վարձակալել է 63,0քառ.մ տարածք: Օրենքով նախատեսված կարգով կնքվել է համապատասխան պայմանագիր, հաստատվել նոտարարական ծառայության կողմից /նոտարարական ակտի կոդ 612-20190207-37-3494517/:

Վարձակալության՝ անցած չորս տարիներին կազմակերպությունը պատշաճ կատարել է պայմանագրային պայմանները, բարեկարգել, ժամանակին վճարել կոմունալ և վարձակալության վճարները: Մեզ հաջողվել է խնայողությունների շնորհիվ փոխհատուցել նաև 2023թ տարեկան վարձակալության համար, չնայած պայմանագրի վերջնաժամկետը լրանում է 2023թ. փետրվարի 5-ին:

Մամուլի ակումբն այժմ մշակում է կազմակերպության 2023թ-2027թթ ռազմավարությունը, ինչպես նաև եկող տարվա աշխատանքային պլանը, բյուջեն: Այդ առումով անհրաժեշտ է քարտեզագրել մեր ռեսուրսները, որոնց թվում ակնկալում ենք նաև այն տարածքը, որն այժմ զբաղեցնում ենք:

Այդ նպատակով խնդրում եմ օրենքով նախատեսված կարգով ժամկետից շուտ երկարաձգել վարձակալության պայմանագիրը՝ հիմք ունենալով անշարժ գույքի վարձակալության վերոնշյալ պայմանագրի թիվ 9 հոդվածի 9.2 և 9.3 կետերը, ըստ որոնց, պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված, ինչպես նաև որևէ կետի փոփոխություն չի հանգեցնում մյուս կետերի դադարեցմանը կամ չեղարկմանը:

Նախապես շնորհակալություն

Հարգանքներով, ՀԿ-ի նախագահ **Մուսաննա Շահնազարյան**



ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
4873